Մարգարեթը փրկում է բոլորին և դառնում օրվա հերոսը

Առաջին միսիոներները Ուելս եկան 1840 թվականին:

Ուելսի գյուղերից մեկն ունի աշխարհի ամենաերկար քաղաքի անվանումը:



Ուելսում ավելի շատ ոչխար կա, քան մարդ:

Մայքլ Հիլ
(Հիմնված է իրական պատմության վրա)

Մարգարեթը կանգնեց տախտակամածին և նայեց իր շուրջը գտնվող կապույտ օվկիանոսին: Նավը հսկա ալիքների վրա վեր ու վար էր ճոճվում:

Մարգարեթի ընտանիքը վաճառել էր գրեթե ամենը, ինչ ուներ՝ Միացյալ Նահանգներ նավարկելու համար: Ուղևորությունը տևելու էր վեց շաբաթ: Մարգարեթը տխուր էր, որ լքեց իրենց տունը Ուելսում: Բայց նա նաև ոգևորված էր իր նոր տան համար:

Մի քանի ամիս առաջ Մարգարեթի ընտանիքը հանդիպել էր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներներին: Մարգարեթը և նրա ծնողները մկրտվեցին: Եվ հիմա նրանք պատրաստվում էին միանալ Սիոնի մյուս Սրբերին:

Ճամփորդությունը մինչ այժմ դժվար էր: Մարգարեթի մայրը հիվանդ էր: Իսկ նրա հայրը հիվանդ էր ածխահանքերում տարիներ շարունակ աշխատելու պատճառով: Ուստի Մարգարեթը հոգ էր տանում նրանց մասին: Նա խնամում էր նաև իր փոքր եղբորն ու փոքրիկ քրոջը: Դա դժվար աշխատանք էր: Բայց Մարգարեթը չէր բողոքում:

Երբեմն նավն այնքան էր օրորվում ջրի վրա, որ Մարգարեթը սրտխառնոց էր ունենում: Երբեմն նա վախենում էր: Երբ նա վախենում էր, պինդ փակում էր աչքերը և օգնություն խնդրում Երկնային Հորից:

Մի օր Մարգարեթը գոռգոռոց լսեց. «Նավի մեջ ջո՞ւր է լցվում: Մենք սուզվո՞ւմ ենք»:

Բոլորը խուճապի մեջ էին: Կապիտանը բոլորին ասաց, որ դույլեր գտնեն: Մարդիկ դույլերով ջուր էին հավաքում և թափում նավից դուրս:

Մարգարեթը ուզում էր օգնել: Նա ծնկի եկավ իր մահճակալի մոտ և տքնաջան աղոթեց: Խնդրո՛ւմ եմ, Երկնային Հա՜յր, օգնիր ինձ օգնելու ինչ-որ միջոց գտնել»:

Մի խաղաղ զգացում լցրեց Մարգարեթի սիրտը: Նա գիտեր, որ Երկնային Հայրը հսկում է իրեն: Նա կօգնի իրենց:

Սպա նրա մոտ մի միտք ծագեց:

Մարգարետ Գրիֆիթսը 11 տարեկան էր, երբ մկրտվեց:

Երբ Մարգարեթը մեծացավ, նա ամուսնացավ և ունեցավ ութ երեխա:

26 տարի նա ծառայել է որպես Սփոփող միության նախագահ:

ԱՄՈՒՆ: ԼՈՒՍ ԱՍՏՐԱԲԱՅԻ

Նա իր մահճակալից հանեց երկու սպիտակ բրդյա վերմակ և վազեց գտնելու կապիտանին: «Ահա»,- ասաց նա: Տրանք դրեք անցքի մեջ, որ արտահոսքը դադարեցվի»:

Կապիտանին դուր եկավ Մարգարեթի միտքը: Նա ծածկոցները խցկեց անցքի մեջ: Հետո մի մեծ դույլ տաք ձյութ լցրեց դրանց վրա: Երբ ձյութը սառեց, արտահոսքը փակվեց:

«Շնորհակալ եմ ձեզ՝ վերմակները տալու համար»,- ասաց կապիտանը: «Ձեր արագ մտածողությունը փրկեց բոլորին»:

Մարգարեթը ժպտաց: Նա գիտեր, որ Երկնային Հայրը պատասխանել էր իր աղոթքին: Ռահվիրայի նրա ճամփորդությունը նոր էր սկսվում, և նա գիտեր, որ Տերը կօգնի իրեն անցնել ճանապարհի յուրաքանչյուր քայլը: ●